

ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան քին Կ. Պոլսոյ հոյս 40 Մէճ.
Գաւառաց 2 լիւր
Վեցաւի Կ. Պոլսոյ 3 Մէճ.
Գաւառաց 1 լիւր
Օտար երկիրներու 50 Պր.
Շանուցման տողը մէկ անգամի հաւ.
Վար 3 լիւրուչ, երկու անգամի հաւ.
Վար 2 լիւր է. աւելի անգամներու
համար գատ աւելարկութիւն կըլ-
այ :

Խորաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրն գնացած լրագրաց ճանրու
ձախքը Խորագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ ճանաչ
կամ որ և ինչ գրութիւն Խորագրի
— Տնօրէնին պիտի ուղարկուի, զայս
թիւ Սանտրքըրար շատաւի թիւ
198, Նօրօ խան, Մասիսի գրասեն
եակը :
Ճանրու ծախքը չմտաւած չա-
մակ չընդունուի :
Չտարած ճանաչ, յոյս ու ան, եւ
ետ չեն արուի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ 31 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օրուան քաղաքական լուրերը Գը-
րեթէ զուրկ են կարեւորութենէ . Բ.
Դուռը կը ջնայ իւր բազմադիմի դըժ-
ւարութեանց դէմ՝ դնել կամ զանաք
հեռացնել, որչափ կարելի է . բայց
ինքիւնը կնճաւայ են, և լուծու-
մը բաւական դժուարին : Առ կախ
ինքնուրոյ զխաւորներէն մին է Հելլե-
նականն, և կը հաստատուի թէ մայ-
րաքաղաքիս դեռապանները միաբան-
րէն պիտի միջնորդեն . արդէն Աթէն-
քի կառավարութիւնն հրաւիրեցաւ
պատուիրակներ կարգելու, որպէս
զի Կ. Պոլսոյ մէջ Բ. Դրան պատուի-
րակներուն հետ բանակցին : Ասկէ
առաջ կըսուէր թէ Հելլենական կա-
ռավարութիւնը պայման կառաւար-
կէ որ Բ. Դուռը նախ ընդունի Վե-
հաժողովին 13րդ ատենադրութեան
մէջ առաջարկեալ սահմանադիր բա-
նակցութեանց հիմունքները : Բայց չգիտ-
ցուի որ եթէ այս առաջարկութիւն-
ը կրկնուի, արդեօք Օսմանեան կա-
ռավարութիւնն իւր հաւանութիւնը
պիտի տա, քանզի այն ատենագ-
րութեան ճիշդ մեկնութիւնը կրնայ
ենթադրել թէ Եանեա Յունաստանի
պիտի մնայ : Գուցէ դեռապաններուն
առաջարկութիւնները կատարեալապէս
միաբան չլինին, և ահա այս պատ-
ճառաւ ալ Բ. Դուռը կրնայ մերժել
Յունաստանի պահանջումն : Հեռա-
գիր մը կը ծանուցանէ թէ իտալական
դեռապանը խորհուրդ պիտի տայ եղբ-
ր Դրան, որպէս զի Յունաստանի
հետ բանակցութեանց մէջ խոհանու-
թեամբ չարթի, և բացարձակապէս
պէտք եղածէն աւելի քան մը չտայ
անոր : Այս զրոյցը կրնայ Բ. Դրան
ընդդիմութիւնը քաջալերել . բայց
միւս կողմէն պէտք չէ մտնել որ
Հուլի մէջ ալ ծերակուտի անդամ
Պ. Մամիսիէն նախագահութեան
ներքե կողմնած Հելլենաստանի
մտնախառնը նախարարաց գլուխ Պ.
Տէրլէթիի ներկայութեամբ խնդրեց
որ Յունաստանի պահանջներուն պաշտ-
պան կտնդնի, և Պ. Տէրլէթիս պա-
տանութեանց թէ իտալիոյ հասարակա-
յին իրաւանց մէկ սկզբունքն է աղ-
գայութեանց զարգացումն : Ասկէ
կրնայ հասկնալ թէ իտալիա Հելլե-
նական ազգայնութիւնը կրնայ պաշտ-
պանել բայց խօսքը առաջգահան է,
և կարելի է զայն Ալպանիական աղ-
գայութեան ևս տանիլ, որ իբր Ա-
ւստրիոյ թշնամի իտալիոյ բնական
դաշնակից կրնայ լինիլ որ մը : Իստ-
լիա ազգայնութեան սկզբունքին յեն-
լով՝ Տրէնդին և Թրիէստի իսկ պահան-
ջելու կենէ, և մինչդեռ իտալիոյ
սահմանադրութիւն մօտենի Աւստրիական

տէրութիւնը միայն տասներկու հա-
զարի չափ զօրք կը պահէ, իտալիա
եթմանասուն երկու հազարէն աւելի
զօրք ունի սահմանին մօտ :

Աւստրիա Պոսնիոյ կողմէն դէպ
Արեւելք տարածեցաւ, և իւր զինուո-
րական զօրութիւնն այսուհետեւ դէպ
այն կողմը պիտի ծանրանայ, մինչ-
դեռ իւր իտալական և Գերմանական
սահմաններն համեմատաբար տկար
պիտի լինին . իւր էութիւնն երեք
կարեւոր տարրաց մէջ երբեքն է .
մէկ կողմէն Գերմանիա, միւս կողմէն
Իտալիա, և երրորդ կողմէն Սլաւք
Աւստրիոյ համար սպառնալիք են :
Արդէն կըսուի թէ Ռուսիա Պոսնիոյ
վրայ Աւստրիական տիրապետութիւնը
չճանչեր, և իւր հիւպատոսը Կ. Պոլ-
սէն կապաւէ իւր հրովարտակն և ոչ
Վիեննայէն : Մեծ տէրութիւնը աղեր-
սադիր կ'ընդունին Պոսնիայիներէն,
որք Արեւելեան Ռուսիայի նման ինքն-
բնութիւն կը պահանջեն, և միջադ-
դային զօրաց պահպանութիւնը կու-
ղեն իրենց գաւառին վրայ : Սերպիա և
Գարաապար, որք Պոսնիոյ ապստամբու-
թեանց մէջ մատ ունէին, անոր Աւս-
տրիական պաշտպանութեան ներքե
անցնելուն կը դժկամակին : Աւելի
վստահար է Աւստրիոյ Ռուսաց կայ-
սեր « պաշտպան Սլաւաց » տիրապետ
առնուն, յորմէ կը հետեւի թէ Աւստ-
րիոյ մէջ գտնուած միլիոնաւոր Սը-
լաւներուն աղ զուլին է : Բեգրապուր-
կի Աւստրիական դեռապանն հրահանգ
առած է եղբոր այս տիրապետին դէմ
բողոքելու, և անշուշտ իրաւունք ու-
նի : Արեւելեան ինքիւրն այսպէս միշտ
մեծ տէրութեան նախանձընդդէմ
չափուց և աղքատութեանց աստա-
րեղ եղած է, ինչպէս էր դարեւ
ի վեր . յաղթանակը միայն հզօրա-
գոյններուն է և ինքիւրները զօրու-
թեամբ կը լուծուին : Եւրոպական
լրագրաց մէջ պատմութիւն մը կը
տեսնեմք, որ կը ցուցնէ թէ զօրու-
թեան և կատարուած իրողութեան
առջև խոհաբաններ երբեքն ո'րչափ ան-
հրաժեշտ է : Երբ Ալէքս փաշան Օս-
մանեան դրօշը պարզելու ինքիւրն
Եւրոպական յանձնախմբին ներկայա-
ցուց, Օսմանեան առաջին պատուի-
րակ Ալիմ փաշան ըսաւ թէ Վալինե-
րուն Պէրմանը կարգադրուած ժամա-
նակ դրօշ պարզելու սովորութիւն
չկայ՝ եթէ կառավարութեան ապա-
րանքը բերդ մը չէ, այսինքն դրօշը
միայն բերդերու վրայ կը պարզուի .
կարծիք մը, որ Ալէքս փաշան կա-
ղաւթէր դրօշ պարզելու պարտաւո-
րութենէն . բայց այս կարծիքը կա-
տարուած իրողութեան և պարագա-
յին զօրութեան հետեւանքն էր :

Վաղըթ լրագրին մէջ հրատա-
րակեալ հեռագիր մը կը ծանուցանէ
թէ Աւստրո-Հունգարական դեռապան

Ջիլի կոմսը Կ. Պոլսէն չմեկնած, Վեհ.
Սուլթանն անոր վաւաք յայտնեւ է
որ Նօվի-Պադարի պայմանագրու-
թեան մէկ հատուածը բարեփոխի :
Աւստրոյ կայսրն Օսմանեան տէրու-
թեան հետ իւր ունեցած բարեկա-
մական յարաբերութեան ամրապնդ-
մանը համար՝ Ջիլի կոմսին արտօնու-
թիւն տուեր է յիշեալ բարեփոխու-
մին ընելու . դեռապանն ալ այս ան-
գամ զրկած մէկ տեղեկագրին մէջ
կը յայտնէ թէ իրեն տուած հրամա-
նը կատարած է :

Նոյն լրագրին մէջ հրատարակեալ
Ռիւթէրի ուրիշ հեռագիր մ'ալ հե-
տեւալ լուրը կուտայ .

« Կիպրոսի հասցիներէն Օսման-
եան կառավարութեան վճարուելիք
գումարն որոշելու պաշտօնով Կ. Պո-
լիս գտնուող Պիտալի զնդապետն » այս
նկատմամբ տեղի ունեցած բանակ-
ցութեանց վրայ իւր տեղեկագիրը
զրկեց Անգլիական կառավարութեան
Կիպրոսի պայմանագրութեան յաւել-
ւածին երրորդ յօդուածով որոշուած
էր որ Օսմանեան դանձը մտնող գու-
մարն որոշելու համար վերջին հինգ-
տարուան հասցիներ հիմ պիտի բըռ-
նուի, որով 144,680 ոսկոյ դումար
մը կը դոյնայ : Թէպէտ Բ. Դուռը
Կիպրոսի հասցիներն 173,000 ոսկի
կը հաշուէ, Պիտալի զնդապետը կը-
սէ թէ այս գումարին մէկ մեծ մասն
անուանական է միայն և դանձը չէր
մտներ : Կը յուսացուի որ այս խնդ-
րն 'ի մօտայ կարգադրի » :

ԵԼՄՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎՈՅ
ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Օսմանեան դանձուն երկնական
վիճակը քննելու և անոր բարեօրոման
միջոցները խորհելու նպատակաւ անց-
եալ տարի կողմնած խառն յանձնա-
խմբին գործողութեանց վրայ տեղե-
կութիւններ հրատարակել սկսան եւ-
րոպական լրագրաց մէջ :

Մտնուց դանձուն դուլներուն
նկատմամբ յանձնախմբին առած տե-
ղեկութիւններն անբաւական էին,
բայց իւր տեղեկագիրն ըստ կարել-
ւոյն երկնական ինքիւր պարզած, և
և Օսմանեան երկնային վրայ ամենէն
արժանաւորաւոր նկարագրութեանց
մին լինելուն համար՝ արժան կը հա-
մարմնէ պարունակութիւնն աստ հա-
մառուել :

Տարիներէ 'ի վեր դանձուն հա-
սցիմն օր քան զօր նուազելու վրայ
էր, և հետզհետէ ծագած ապստամ-
բութիւնը և ասոնց յաջորդող պատե-
րալին երկնական հաւատարակու-
թիւնը բողոքովն աւրած էին : Սակայն
չարեաց գլխաւոր պատճառը պատե-
րալը միայն եղած չէ Բ. Դուռն ա-
պագայ տարիներուն հասցիները կան :

Խաւ դրաւի դնելով այնպիսի պարտ-
քեր կնքած էր, զորս զիւրին չէր վը-
ճարել Սակէց դատ պաշտօնատարաց
հին ամաւականները վճարելու կարո-
ղութիւն չունենալով, չէր կրնար
զեղծմանց դարման տանիլ : Յանձ-
նախմբը ցոյց կուտայ թէ այն զեղծ-
մանց և այլ պատճառներով իւր ներ-
կայած հաշուեցոյցն աւելի միջին հաշ-
ւով պիւտոմէ մ'է, քան թէ ներկայ
տարւոյն ճիշդ հաշուեցոյցը : Սոյն
պիւտոմէին թուանշաններն են 14,285,
820 լիւրա հասցի, և 13,006,170 լի-
ւրա ծախք : Երբեք կը տեսնուի որ հա-
սցիմը ծախքէն 1,250,000 լիւրայի չափ
աւելի է : Սակայն յանձնախմբը դե-
տել կուտայ թէ այս յաւելումն իւր-
ին հասցիմ պէտք չէ նկատել . վստա-
ղի նախ թղթագրամով վճարուած
հասցիներուն փոխանակութենէն 3
միլիոն 480,000 լիւրայի վնաս մը գոյա-
ցած է : Երկրորդ փոխանակութիւններ
երաշխատուելու համար շատ մը հա-
սցիմը գրաւի դրուած են, ինչպէս են
օշխարի և աղի տուրքերը, մարտերն
և այլն, որք հետեւաբար դանձը չեն
մտնել . ասոնք կրնամք 3 միլիոն Օս-
մանեան ոսկի հաշուել, որ նախըն-
թաց գումարին վրայ աւելնալով, 8
միլիոն 480 հազար ոսկոյ գումար մը
կը կազմէ, զոր պէտք է վար երթալ
հասցիմի գումարէն, որով այս վեր-
ջինն 3 միլիոն 805,520 ոսկոյ կիցնէ :

Յանձնախմբը դիտել կուտայ
նաե թէ Սպարապետի դրան յատ-
կացեալ 3 միլիոն 100 հազար զօրաց
համար է, մինչդեռ այժմ՝ 300,000
զօրք կայ զինուոյ ներքե, այնպէս որ
Սպարապետի դրան յատկացեալ գու-
մարն 3 միլիոնի պէտք է հանուի, ու-
րով ամբողջ ծախսը գումարը 19 մի-
լիոն 6170 ոսկոյ կը հասնի :

Այսպէս ահա ոչ միայն 1 1/4 մի-
լիոն ոսկի յաւելուած չմտն, այլ
13 1/4 ոսկի բաց կայ առանց 'ի հա-
շիւ աւելու Գոնաթիւտ պարտուց
տոկոսներն, երբեքն պարտքն և
տէրութեան պաշտօնատարաց անվը-
ճար մնացած ամաւականներն : Հասա-
րակային գործերը խաղաղութեան
վիճակի վերածելով, այս ծանր կա-
ցութիւնը կարելի կը լինի քիչ մը թէ
թեցնել . բայց սպառնացող վտան-
գին առաջին աւելու համար Բ. Դու-
ռը 'ի պարտի' ըստ յանձնախմբին
կարծեաց՝ միտնալով ինչու իւր
ծախքերը նուազեցնել, իւր հաւու-
թիւց աղբիւրներն անցնել, և զեղծ-
մանց ու գողութեանց վերջ մը գը-
նել :

Հեղեղալ Բոսնի

ՀԱՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 11 յունիս
Պաշտօնական լրագիրը կը ծանուցա-
նէ թէ Արք. Կարէլ Ռօբլի զօրավարը
Կիպրոս կղզւոյն կառավարութեան հրո-

